ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՌՈՒՑՎԱԾ ԿԱՀՈՒՅՔԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ 21.06.2023թ. N «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/02» ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«04» «10» 2023թ.

ք. Երևան

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավարի պարտականությունները կատարող Ն. Գալստյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԷՔՍԻՏՈ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Կ. Աղյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները և հիմք ընդունելով 21.06.2023թ. կնքված N «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/02» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.13 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր)՝ հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հաշվի առնելով Պայմանագրի 1-ին չափաբաժնով նախատեսված 2500 քմ ներկառուցված կահույքի պատրաստման և տեղադրման աշխատանքներից 1000 քմ աշխատանքների, 2-րդ չափաբաժնով նախատեսված 2000 քմ ներկառուցված կահույքի պատրաստման և տեղադրման աշխատանքներից 800 քմ աշխատանքների մասով **29 831 400 (քսանինը միլիոն ութ հարյուր երեսունմեկ հազար չորս հարյուր)** ՀՀ դրամի չափով ֆինանսական միջոցների առկայությունը և Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման անհրաժեշտությունը՝ Կողմերը որոշեցին.

1.1. Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 2-ը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն Համաձայնագրի հավելված N 1-ի:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Համաձայնագրի և Պայմանագրի պայմանները կիրառվում են 01.09.2023թ.-ից կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում, Պայմանագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա Համաձայնագիրը կնքելը Կատարողի կողմից կատարված աշխատանքների դիմաց վճարումն իրականացվում է Համաձայնագիրը, ինչպես նաև Պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

2.3. Համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.4. Համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, և յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Համաձայնագրի հավելված N 1-ը հանդիսանում է Համաձայնագրի անբաժանելի մասը:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Դատական դեպարտամենտ	***«ԷՔՍԻՏՈ» ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1	Հասցե՝ ք. Երևան, Աջափնյակ, 16 թղմ., 18, բն. 41
ՀՎՀՀ՝ 02583241	ՀՎՀՀ՝ 01260623
Հ/Հ՝ 900011025757	Հ/Հ՝ 16048260010500
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ
Ղեկավարի պարտականությունները կատարող Ն. Գալստյան	Տնօրեն՝ Կ. Աղյան
/ստորագրություն/	/ստորագրություն/

Հավելված N 1
« 04 » « 10 » 2023թ. կնքված N 1 համաձայնագրի

(Հավելված N 2
« 21 » հունիսի 2023թ. կնքված
«ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/02» ծածկագրով պայմանագրի)

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի						
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում			
			հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45421119/501	Ներկառուցված կահույքի պատրաստման և տեղադրման աշխատանքներ	13 965 000	13 965 000	13 965 000	**13 965 000**
2	45421119/502	Ներկառուցված կահույքի պատրաստման և տեղադրման աշխատանքներ	15 866 400	15 866 400	15 866 400	**15 866 400**

**Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Դատական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1
ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011025757
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավարի պարտականությունները
կատարող՝ Ն. Գալստյան

/ստորագրություն/

ԿԱՏԱՐՈՂ
«ԷՔՍԻՏՈ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Աջափնյակ, 16 թղմ., 18, բն. 41
ՀՎՀՀ՝ 01260623
Հ/Հ՝ 16048260010500
«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ

Տնօրեն՝ Կ. Կոլան

/ստորագրություն/